



Վ Ճ Ի Ռ
Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

20 հունիսի 2013թ.

ք. Վանաձոր

ՀՀ վարչական դատարանը, հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ դատավոր
քարտուղարությամբ՝

Արշակ Ալավերդյանի
Արմինե Մարաբյանի

2013թ. հունիսի 6-ին դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի՝
Հմայակ Աղասու Մազմանյանի /հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Շիրակամուտ, անձնագիր՝ AA 0494339, տրված՝ 14.09.1996թ., 052/, ընդդեմ՝ ՀՀ Լոռու մարզպետարանի /հասցեն՝ ք. Վանաձոր, Յալքի հրապարակ 1/, երրորդ անձ՝ Աշոտ Կառլենի Կյուրեղյանի /հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Շիրակամուտ/՝ «ՀՀ Լոռու մարզպետի՝ «ՀՀ Լոռու մարզի «Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրության ուղղությամբ կատարված գործողությունները, ինչպես նաև Հմայակ Աղասու Մազմանյանին իր նախկին աշխատանքում վերականգնելու համար խոչընդոտները ստեղծելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և որպես անվավերության հետևանք Հմայակ Աղասու Մազմանյանին իր նախկին աշխատանքում վերականգնելու խոչընդոտները վերացնելու, այն է՝ ՀՀ Լոռու մարզպետի 05.03.2012թ. թիվ 38-Ա և 05.03.2012թ. թիվ 39-Ա հրամաններն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ».

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հմայակ Մազմանյանի ներկայացուցիչ՝ Ներսես Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, ընդդեմ՝ ՀՀ Լոռու մարզպետարանի /այսուհետ նաև՝ Մարզպետարան/, երրորդ անձ՝ Աշոտ Կյուրեղյանի, խնդրելով՝

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի կարգով ոչ իրավաչափ ճանաչել պատասխանողի՝

1.1 հայցի ապահովման միջոցի կիրառված լինելու պայմաններում /կամ որ քննարկվող դեպքում նույնն է՝ ՀՀ վարչական դատարանի 18.07.2011թ.-ի թիվ ՎԴ/0711/05/11 վճռի պահանջները փաստացի չկատարելու պայմաններում/ նոր տնօրենի նշանակման համար մրցույթ կազմակերպելու ուղղությամբ կատարված գործողությունները:

1.2 ՀՀ վարչական դատարանի 18.07.2011թ.-ի թիվ ՎԴ/0711/05/11 վճռի պահանջները փաստացի չկատարելու գործողությունները:

1.3 ՀՀ վարչական դատարանի 18.07.2011թ.-ի թիվ ՎԴ/0711/05/11 վճռի կատարման համար հարուցված կատարողական վարույթի կարճման համար պատրանք կեղծ հիմքեր, ստեղծելու գործողությունները:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով վերացնել ոչ իրավաչափ գործողությունների հետևանքները՝

2.1 անվավեր ճանաչելով ՀՀ Լոռու մարզպետի 05.03.2012 թվականի թիվ 38-Ա որոշումը:

2.2 անվավեր ճանաչելով ՀՀ Լոռու մարզպետի 05.03.2012 թվականի թիվ 39-Ա որոշումը:

2.3 պարտավորեցնելով ՀՀ Լոռու մարզպետարանին՝ Հմայակ Աղասու Մազմանյանին իր նախկին աշխատանքում /ՀՀ Լոռու մարզի «Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատանքում/ փաստացի վերականգնելու միջոցով վերացնել ՀՀ վարչական դատարանի 18.07.2011թ.-ի թիվ ՎԴ/0711/05/11 վճռի կատարման համար ստեղծված խոչընդոտները:»:

ՀՀ վարչական դատարանի՝ 25.04.2012թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 13-րդ գլխի կարգով, գործը նախապատրաստվել է դատաքննության:

